Հավելված
ՀՀ կառավարության 2013 թվականի
հունիսի 6-ի N 580 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՏԱՐԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՖՈՆԴ ՓՈԽԱՆՑՎՈՂ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կուտակային կենսաթոշակային համակարգի պարտադիր բաղադրիչի շրջանակում պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների կողմից պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների կատարած պարտադիր կուտակային վճարների վերադարձելիությունը երաշխավորող ֆոնդ փոխանցվող երաշխիքային վճարների հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում օգտագործվող հասկացությունները համապատասխանում են «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) նախատեսված սահմանումներին:

ԳԼՈՒԽ 2. ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

3. Սույն կարգի իմաստով երաշխիքային վճարներ են համարվում օրենքով սահմանված պարբերական և միանվագ երաշխիքային վճարները: Միանվագ երաշխիքային վճարները վճարվում են օրենքով սահմանված դեպքերում, չափով և կարգով:

4. Պարբերական երաշխիքային վճարները կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչները հաշվարկում են հետևյալ բանաձևի համաձայն՝

$$QPF = \frac{QAa}{100} \times 0.005,$$

որտեղ՝

QPF- եռամսյակի համար վճարվող պարբերական վճարն է,

QAa- եռամսյակի ընթացքում կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների միջին օրական ցուցանիշն է:

Այն հաշվարկվում է եռամսյակի յուրաքանչյուր օրվա վերջի դրությամբ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի հաշվեկշռում փաստացի հաշվառված պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների մնացորդի հանրագումարը բաժանելով տվյալ ժամանակահատվածի օրերի քանակի վրա: Այսպես՝

$$QAa = \frac{A1 + A2 + \ldots Ai \ldots + An}{n},$$

որտեղ՝

Ai - i-րդ օրվա վերջի դրությամբ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի հաշվեկշռում փաստացի հաշվառված պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների մնացորդն է

n- եռամսյակի օրերի քանակն է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ